ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX Դ. ՍԿԶԲԻՆ

(Բյուջեի ծախսերը և սնունդը)

Ս. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Հետխորհրդային շրջանում Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը մեզանում նվազել է։ Մինչդեռ, բանվորության անցած ուղու, մասնավորապես նրա դրությանն առնչվող հիմնախնդիրների նորովի լուսաբանումը ունի հույժ արդիական հնչեղություն։

Մենք համամիտ չենք խորհրդային պատմագրության մեջ ընդունված այն տեսակետին, ըստ որի, տարեցտարի վատթարանում էր բանվորների վիճակը։ Կապիտալիզմի զարգացմանը՝ իր կազմավորմանը զուգընթաց երկրի բանվոր դասակարգը քիչ թե շատ բարելավում էր իր նյութական և իրավական դրությունը։ Սակայն բանվորական առանձին կարգախմբերի դրության մեջ նկատվող դրական տեղաշարժերը չէին կարող արմատապես բարելավել բանվոր դասակարգի գոյավիճակը ամբողջովին վերցրած։

Ռուսական կայսրությունում աշխատուժի շահագործումը տարբեր սոցիալ-տնտեսական և պատմական պայմաններում էր ընթանում, որոնք էլ կանխորոշեցին առանձին տարածաշրջանների բանվորների կենսամակարդակների անհավասարությունը։ Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգը XX դ. սկզբներին գտնվում էր կազմավորման գործընթացում, նրա վերջնական կայացումը դեռևս չէր ավարտվել, հետևաբար նա ապրում և աշխատում էր կապիտալիստական և ազգային կեղեքման ավելի ծանր պայմաններում, որն արտահայտվում էր նվազագույնի հասնող ցածր աշխատավարձով, սակավ բյուջեով, երկար աշխատօրով, անբավարար սնունդով և աշխատանքային վատթար պայմաններով։ Թեպետ, հայ պատմագրության մեջ ուսումնասիրվել է բանվորների դրությունը[1], սակայն այդ հիմնահարցի առանձին բաղադրամասեր դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից։ Արդ քննենք բանվորների բյուջեն և սնունդը, որոնք նրանց դրության կարևորագույն ցուցանիշներից են։

Ուսումնասիրելով բանվորական բյուջեն՝ կարող ենք ավելի որոշակի և հստակ պատկերացում կազմել Արևելյան Հայաստանի բանվորների նյութական դրության մասին։ Փորձենք Պետերբուրգի, Մոսկվայի, Բաքվի, հատկապես արևելահայ բանվորների բյուջեների տվյալների համադրությամբ ներկայացնել Արևելյան Հայաստանի բանվորության ընտանեկան բյուջեի մոտավոր պատկերը։ Համեմատության համար վերցրել ենք Ռուսաստանի հատկապես տեքստիլ, ինչպես նաև Բաքվի արդյունաբերական բանվորների բյուջեները՝ հաշվի առնելով Բաքվի բանվորների մեջ հայերի մեծ տեսակարար կշիռը, նրանց և Արևելյան Հայաստանի բանվորների տնտեսական դրության քիչ թե շատ նմանությունը։ Աղյուսակում բանվորական կյանքի նկարագրության բավականին լայն պատկեր է տրված։ Աղյուսակի տվյալների վերլուծությունը վկայում է, որ ուսումնասիրվող բանվորները հաղիվ ծայրը ծայրին են հասցրել, և բյուջեի մեծ բաժինը ծախսվել է նրանց գոյության պահպանման համար։ Ինչպես նկատում ենք, հայ միայնակ բանվորների ամսական բյուջեն կազմում էր 31 ռ. 65 կոպ.։ Մեր հաշվարկներով հայ բանվորը բնակարանի, սննդի և հագուստի վրա ծախսում էր բյուջեի 50,5%-ը, Պետերբուրգի բանվորը այդ նպատակով

---

1 Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Ա. Սիմոնյան, *Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն*, Ե., 1988, էջ 75—116։

ծախսում էր բյուջեի 65,8, Մոսկվայինը՝ 48,9, Բաքվինը՝ 57,3%-ը։ Ուշագրավ է, որ Պետերբուրգի, Մոսկվայի և Բաքվի բանվորների սննդի, հագուստի և բնակարանի ծախսերի մեջ այնքան մեծ տարբերություն չկար, մինչդեռ զգալի տարբերություն է նկատվում կուլտուրական պահանջմունքների համար կատարվող ծախսերի միջև։ Այսպես, Պետերբուրգի բանվորն այդ նպատակով ծախսում էր բյուջեի 4,6, Բաքվինը՝ 1,6, Մոսկվայինը՝ 0,9, հայ միայնակ բանվորները՝ 0,7%։ Ինչպես նկատում ենք, կուլտուր-լուսավորչական կարիքների համար ամենաքիչը ծախսում էին հայ բանվորները, որը մենք բացատրում ենք նաև հոգևոր և կուլտուրական պահանջների համար անհրաժեշտ ժամանակի և համապատասխան օջախների բացակայությամբ։ Հատկանշական է, որ Հայաստանից դուրս գտնվող հայ բանվորների բյուջեի ծախսերի ամենամեծ մասը կազմում էր հարազատներին հատկացվող գումարը (29,9%)։ Դա միանգամայն բնական է. հայրենիքից դուրս, այդ թվում՝ Բաքվում, աշխատող հայ բանվորների ճնշող մեծամասնությունը ծննդավայրի, ընտանիքի հետ կապերը չէին խզել։ Հարազատներին դրամ ուղարկելը ծանր էր նստում բանվորի վրա. վերջինս ամեն ինչի համար (սնունդ, բնակարան, հագուստ) ստիպված խնայողություն էր անում։ Արևելյան Հայաստանի բանվորների վիճակն ավելի ծանր էր, նրանց մեծ մասը աղյուսակում նշված քաղաքների բանվորների համեմատությամբ ցածր աշխատավարձ և ավելի նվազ եկամուտ ունեին։ Պետք է ասել, որ Արևելյան Հայաստանի բանվորների կազմում կանանց սակավությունը ծայրահեղորեն նվազեցնում էր բյուջեն։ Ինքնին հասկանալի է, որ այն ընտանիքներն էին քիչ թե շատ նյութական բավարար վիճակում գտնվում, որոնցում, բացի տղամարդուց, աշխատում էին նաև ընտանիքի մյուս անդամները։ Արևելյան Հայաստանի բանվորների բյուջեն շատ ավելի ցածր էր ընտանեկան նվազագույն ծախսերից։ Նույնիսկ համեմատաբար բարձր վարձատրվող՝ Ալավերդու պղնձագործ և երկաթուղային բանվորների զգալի մասը ամսական 20 ռուբլուց պակաս էին ստանում, որը Ռուսաստանում պաշտոնապես ընդունված ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնից ցածր էր[2]։ Թե ինչքան քիչ էր նրանց իրական աշխատավարձը, կարելի է դատել հետևյալ փաստով։ Համաձայն մեր հաշվարկների, Արևելյան Հայաստանում 1907—1910 թթ. համապատասխանաբար 400-ական գրամ հաց, յուղ, միս, շաքար, պանիր, 1 փութ աղ և կարտոֆիլ և մեկ հավ գնելու համար երկաթուղային բանվորները պետք է մոտավորապես վճարեին իրենց 2,6, պղնձագործները՝ 3,8, ֆարրիկագործարանային բանվորները՝ 6,9, մետաքսագործ բանվորները 7 օրվա օրավարձերը[3]։ Նշենք, որ Ռուսաստանում ամիսը 45 ռ. ստացող բանվորի ընտանիքը կարիքավորների թվին էր դասվում (բնակարանի, ջրի, տաքացման և այլ ծառայությունների վարձը կազմում էր 23 ռ., հագուստը պատահականորեն էին ձեռք բերում, սահմանափակվում էին սև հացով ու թեյով)։ Տվյալների համաձայն, երկրում 30 ռ. ստացող շատ երկաթուղայիններ ըստ էության ապրում էին կի-

---

2 Рабочий класс России от зарождения до начала XX в. М., 1983, с. 247. 1904 թ. ապրուստի համար անհրաժեշտ ամսական նվազագույնը միայնակ բանվորների համար կազմում էր 21ռ., միայնակ կանանց համար՝ 17ռ., ընտանիքավոր բանվորների համար սահմանվել էր 32—38 ռուբ. (տե՛ս Расцвет и закат Российской империи (XIX-нач. XX вв.) М., 1997, с. 114.

3 ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՊԿԱ), ֆ. 117, ց. 1, գ. 584, թ. 92, 157, գ. 1951, թ. 312, գ. 1204, թ. 1—4, 7, գ. 1219, թ. 6, 18, 20, ֆ. 195, ց. 1, գ. 3, թ. 3, 7, 9, ֆ. 94, թ. 1, գ. 2664, թ. 13, 16, 27, 37, 4159, 87—122, Российский государственный исторический архив в Петербурге (այսուհետև՝ РГИА), ф. 20, оп. 12, д. 247, с. 1—5, ф. 23, оп. 9, д. 451, с. 1, 4, ф. 1268, оп. 16, д. 263; Города России в 1904 г., СПб., 1906, с. 0251, 0258, 0302.

սաքաղց՝ իրենց զրկելով ամենաանհրաժեշտից[4]։ Արևելյան Հայաստանի բանվորների իրական աշխատավարձի շնչինությունը ավելի է աչքի զարնում, երբ այն արտահայտում ենք արդյունաբերական ապրանքներով[5], կուլտկենցաղային, առողջապահական, հոգևոր և այլ պահանջմունքներով։ Բանվորների ճնշող մեծամասնությունը (բացի փոքրաթիվ շերտից), վարձու աշխատանքի միջոցով ընտանիքի ապրուստի նվազագույն ծախսերից քիչ էր վաստակում։ Նրանց ընտանեկան բյուջեն մշտական պակասորդ ուներ, որը մի կերպ լրացվում էր ընտանիքի անդամների վաստակած լրացուցիչ դրամով։

Սնունդ—Բանվորների կյանքի նյութական պայմանների առավել բնորոշ գործոններից մեկը սնունդն է։ Ցածր աշխատավարձ ունեցող բանվորությունը սննդամթերքի անընդհատ թանկության պայմաններում չէր կարող բավարար չափով սնվել, Ռուսաստանում բանվորի սնունդը զգալիորեն զիջում էր Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի բանվոր դասակարգի սննդին[6]։ XIX դ. 80-ական թվականներին Մոսկվայի նահանգի տարբեր ձեռնարկություններում հանդիպում էին շատ թվով բանվորներ, որոնց անհասանելի էր ոչ միայն միսը, շաքարը, այլև նույնիսկ հնդկաձավարի շիլան։ Բանվորները հիմնականում սնվում էին հացով, կաղամբով, կարտոֆիլով, ընդ որում, շատերին դա էլ չէր հասնում[7]։ Երկրում բանվորների զգալի մասը հնարավորություն չուներ ընտանիք կերակրել, գոյությունը պահպանել[8]։ «Ռուսսկայա միսլ» ամսագրի 1893 թ. սեպտեմբերյան համարում, որտեղ նշվում է, թե օրվա ընթացքում ինչքան սնունդ է հարկավոր մարդուն (ճարպ, սպիտակուցներ, միս, շաքար, կաթ, կարտոֆիլ), մռայլ գույներով է ներկայացվում աշխատավոր ժողովրդի սննդի պատկերը։ Ամսագիրը գրում է, որ ժողովրդի սնունդը շատ աղքատիկ է և միօրինակ (հաց, շիլա, կարտոֆիլ, երբեմն նաև կաթ), գնալով օրաբաժնից վերանում է միսը, և այդ առումով Ռուսաստանն ամենաաղքատ երկիրն է։ Ժողովուրդը ստիպված իրեն զրկում է կենսական պահանջմունքներից, այն դեպքում, երբ երկրից արտահանվում է պարենային ապրանքների նշանակալի մասը, որի կարիքը ինքը ուժեղ զգում է[9]։ Եվ իրոք, Ռուսաստանն արտահանում էր ոչ միայն հաց, այլև կարագ, ձու, շաքար, միս, ճարպ և առաջին անհրաժեշտության այլ մթերքներ[10]։ Մեկ շնչի հաշվով Ռուսաստանն արտահանում էր 1897—1901 թթ. 5 ռ. 40 կոպ. ապրանքներ[11]։ Եվ դա այն դեպքում, երբ եվրո-

---

4 И. М. Пушкарева. Железнодорожники России в буржуазно-демократических революциях. М., 1975, с. 58.

5 Միայն հագուստների վրա մեկ շնչի ծախսերը Նոր Բայազետում 1908 թ. կազմել են 8ռ., իսկ Մեծ Ղարաքիլիսայում 1911 թթ.՝ 10ռ. (Памятная книжка Эриванской губернии на 1908 г. отд. IV, с. 250, Памятная книжка Эрив. губ. на 1914 г. IV, с. 76). Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ 1914 թ. Թիֆլիս—Կարս երկաթգծի բանվորները վատ են հագված, ցնցոտիների մեջ են, իսկ շատերը ոտաբոբիկ են աշխատում [22 ՊՊԿԱ, ֆ. 136, ց. 1, գ. 173, թ. 107, 109, տե՛ս նաև О. С. Баликян, Из истории формирования рабочего класса на строительстве дорог Восточной Армении (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1975, №3, էջ 92).

6 Ю. И. Кирьянов. Жизненный уровень рабочих России. XIX-начало XX в. М., 1979, с. 169.

7 Отечественные записки 1882 г., т. 261, № 4, раз. II, с. 1881. Из фабрично-заводского мира.

8 Государственный архив в Российской Федерации (ГАРФ). ф. 453, оп. I, д. 509, с. 1 3, 4.

9 Русская мысль, сентябрь, 1893, № 9, с. 45, 50, 66.

10 РГИА. ф. 32, оп. I, д. 991, с. I, 30.

11 П. Табурно. Эскизный обзор финансово-экономического состояния России за последние 20 лет (1882—1901 гг.), СПб., 1903, с. 102.

պական երկրների բանվորների համեմատությամբ (որոնց աշխատավարձը 2 և ավելի անգամ բարձր էր) ռուսական պրոլետարիատը ավելի թանկ էր վճարում սննդամթերքի համար։ Օրինակ՝ երկրում թեյը և շաքարը 2 անգամ թանկ արժեին, քան Անգլիայում[12], 1897—1903 թթ. բանվորների աշխատավարձը բարձրացավ 12%-ով, դրա հետ միաժամանակ կտրուկ՝ 25—60% աճեցին առաջին անհրաժեշտության մթերքների գները[13]։ Նման պարագայում այնքան էլ զարմանալի չէ, երբ XX դ. սկզբին բանվորների սնունդը համապատասխանում էր նորմայի միայն 70—80, իսկ աղքատ գյուղացիներինը՝ 50—60%-ին[14]։

Աշխատավորության կենսամակարդակը ցածր էր հատկապես կայսրության ծայրամասերում ու ազգային շրջաններում։ Քննության առնվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում ժողովրդական զանգվածների եկամուտի սղությունը նույնպես ուղեկցվում էր կենսամթերքների թանկությամբ։ 1880-ական թվականների համեմատությամբ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների գները Երևանի նահանգի քաղաքներում գնալով թանկանում էին։ Եթե 1886 թ. Երևանում հացի 1 ֆունտն արժեր 1,5—2 կոպ., ապա 1901 թ. այն արժեր 3 կոպ., 1913 թ.՝ 4 կոպ., ոչխարի միսը համապատասխանաբար 4—5 կոպեկից դարձավ 8—10 կոպ., 1913 թ.՝ 14 կոպ., յուղը 28 կոպեկից դարձավ 35—45 կոպ., 1913 թ.՝ 50 կոպ.[15]։ Նշված շրջանում աճել են նաև ձվի (12-ից 25 կոպ.), պանրի (7,5-ից 20 կոպ.), աղի (30-ից 60 կոպ.), շաքարի, կաթի, կարտոֆիլի և կենսական այլ ապրանքների գները։ Միջին հաշվով 1886—1913 թթ. լայն սպառման ապրանքների գները բարձրացել են երկու-երկուսուկես անգամ[16]։ Բավականին բարձր էր հացի գինը. այն 1886—1913 թթ. ավելացել է մոտ 2 և ավելի անգամ։ Ասենք, որ սովորաբար հացի արժեքով է որոշվում առաջին անհրաժեշտության սննդամթերքների գները։ Հացը բանվորների հիմնական սննդամթերքն էր։ Սննդամթերքների թանկության առումով աչքի էին ընկնում Ալեքսանդրապոլը, հատկապես Նոր Բայազետը, Նախիջևանն ու Օրդուբադը[17]։ Հասկանալի է, որ նման թանկության պայմաններում չնչին վարձ ստացող սեզոնային բանվորը, որի օրավարձը 1901—1902 թթ. կազմում էր 60 կոպ., 1911 թ. տատանվում էր 60—80 կոպ. սահմաններում[18], չէր կարող բավարար չափով սնվել։

Հայաստանի բանվորների սնունդի տեսականին աղքատիկ էր։ Նրանք հիմնականում սնվում էին հացով, պանրով, կարտոֆիլով, ապուրով, բանջարեղենով, լավագույն դեպքում՝ թեյով, կարիքի մեջ. հղածներն օգտվում էին նաև անորակ սննդամթերքներից[19]։ Բանվորների սոցիալական անտանելի վիճակն այնքան ակնհայտ էր, որ դա հարկադրված էին խոստովանել նույնիսկ բարձրաստիճան պետական պաշտոնյաները։ Կայսրին ուղղված 1905 թ. հունվարի 17—18-ի զեկուցագրում նրանք բանվորների հուզումների պատճառները բացատրում են ցածր աշխատավարձով, բնակարանների թանկությամբ, բանվորական երկար օրով և մասնավորապես վերջին 7 տարում (1898—1905 թթ.) առաջին անհրաժեշտության մթերքների գների չափազանց բարձրացումով. անորակ հացի արժեքը՝ մինչև 25%, ձավարինը՝ 36, ցորենինը՝ 60, ոլոռինը՝ մինչև 50% և այլն[20]։ Նույն ժամանակաշրջանում բանվորների միջին

---

12 Э. Э. Крузе, Положение рабочего класса России в 1900—1914 г. Л., 1981, с. 211.

13 К. А. Пажитонов, Положение рабочего класса в России, М., 1906, с. 150—151.

14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, թ. 414։

15 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 117, ց. 1, գ. 594, թ. 10—13, գ. 1219, թ. 18—20, գ. 773, թ. 10—14, գ. 774, թ. 3—5, տե՛ս նաև Памятная книжка Эриванской губернии, 1914 г., отд. IV, с. 76.

16 Города России в 1904 г. СПб., 1906 г. с. 0258, 0451 տե՛ս նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 117, ց. 1, գ. 1307, թ. 1—5, 378—381, գ. 1351, թ. 312,

17 Города России в 1904 г., с. 0258, 0451։

18 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 117, ց. 1, գ. 1219, թ. 18—21, ց. 1, գ. 1233, թ. 226։

19 Весь Кавказ, Баку, 1915 г., отд. II, с. 358.

20 ГАРФ, ф. 543, оп. I, д. 510, с. 1, 8, 16.

աշխատավարձը բարձրացել է 12%-ով, այն դեպքում, երբ միայն 1903 թ. սննդամթերքի գները աճել են 15—45%-ով[21]։

Ինչպես արդեն փաստել ենք, բանվորներն աշխատավարձի զգալի մասը ծախսում էին կենսամթերքների վրա՝ ղրկվելով ընտանիքի հանապազօրյա պահանջները ապահովելու հնարավորությունից։ Իր կազմավորման ողջ ժամանակահատվածում նույնիսկ համեմատաբար լավ վարձատրվող պղնձագործ բանվորը չէր կարողանում իրեն ապահովել ամենաանհրաժեշտ մթերքներով։ Մեր հաշվարկներով, եթե Ալավերդու պղնձարդյունաբերության բանվորը 1880-ական թվականներին իր օրավարձի 45,4%-ով կարող էր 1 ֆունտ յուղ գնել, 1905 թ.՝ 37.4, իսկ 1910 թ.՝ 55%-ով, ապա Զանգեզուրի բանվորները, որպեսզի դնեին նշված սննդամթերքը, պետք է համապատասխանաբար ծախսեին իրենց օրավարձից, 1886 թ.՝ 50, 1905 թ.՝ 61, 1910 թ.՝ 65%։

Արևելահայ բանվորների զգալի մասը փաստորեն թերասնվում էր։ Այնպիսի մթերքներ, ինչպիսիք էին միսը, շաքարը, հավը, ձուկը, հայ բանվորության զգալի մասը սահմանափակ էր օգտագործում[22]։ Արևելյան Հայաստանի քաղաքային բանվորների մեծամասնությունը սնվում էր իր հաշվին՝ տանը։ Հատուկ պետք է կարևորենք, որ չնայած հայ բանվորները մթերքների զգալի մասը (օր.՝ շաքարը, թեյը, աղը, ձուկը, հացը) գնում էր, այդուհանդերձ, համոզված ենք, որ սեփական տնտեսության և բանջարանոցի գոյությունն էր միայն նրանց ճնշող մեծամասնությանը թույլ տալիս քաղցի չմատնվել։ Բանվորների մի մասը կերակրվում էր բանվորական ճաշարաններում։ Ճաշարաններում տրված սնունդը շատ առումներով չէր բավարարում նրանց և լուրջ դժգոհության տեղիք էր տալիս։ Այսպես, 1903 թ. Կարսի մի շարք արհեստավորական ցեխերի բանվորներ անբավարար սննդի պատճառով գործադուլ են անում։ Նախնական պայմանավորվածության համաձայն, սնունդը ձեռնարկատերերի հաշվին էր, բայց այն անբավարար էր, երկար աշխատելուց հետո (առավոտյան 4-ից 11-ը) կերակրվում էին հացով, պանրով, լավագույն դեպքում՝ շաբաթը մի քանի անգամ տաք ճաշով[23]։

1905 թ. ապրիլին Երևանի սննդի և սպասարկման ոլորտի ծառայողները, բողոքելով ուտելիքից, պահանջում են բանվորական ճաշարաններում երկու բաժին ճաշ տալ և վերացնել հաճախ կիրառվող 20 կոպեկ պահումները՝ ջարդված ամանեղենի համար[24]։ 1907 թ. հունվարին Սարաջևի գինու և կոնյակի գործարանի գործադուլ հայտարարած բանվորները պահանջում են յուրաքանչյուրին ամեն օր տալ թեյ, շաքար և ամիսը 100 գ. օղի[25]։

1905 թ. Ելիզավետպոլի (Գանձակ, Շուշի) մետաքսաթելի արտադրության բանվորների սննդի օրաբաժինը բաղկացած էր հաց ու պանրից և երբեմն՝ կաթից, ամռանը նաև մրգերից ու բանջարեղենից։ Տաք ճաշը և միսը հազվադեպ էին լինում, նախաճաշը և ճաշը շատ սակավ էին, ճաշարան չկար։ Երևկոյան բոլոր բանվորները գնում էին իրենց տները և միայն ընթրելիս էին օգտվում տաք կերակուրից[26]։

Անբավարար էր նաև պղնձարդյունաբերության բանվորների սնունդը։ 1899 թ. Շամլուղի բանվորները բողոքում են, որ խանութպանները եռակի թանկ

---

21 Նույն տեղում, էջ 16—17։

22 Նույն տեղում, դ. 509, էջ 1, 3, 4, գ. 510, էջ 2, 8, 15—16։

23 Մ. Յոլչյան. Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907 թթ., Ե., 1930, էջ 139։

24 ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՊԱ), ֆ. 1022, գ. 167, ց. 2, թ. 1։

25 ГАРФ. ДП. 4, д. 60, 1907, л. 87, ч. 1, с. 1—2. ФАКТЫ, 1907, № 2.

26 Д. Малюженко, Санитарное и экономическое состояние шелкомотальных заводов в Елизаветпольской губернии. (Вестник общественной гигиены, судебной и практической медицины, СПб., 1905, № 1, с. 59).

գներով անորակ մթերքներ են վաճառում իրենց։ Կրպակներից ապառիկ օգտվող բանվորների գրքույկներում ավելի են գրանցում, աշխատավարձն ուշ ստանալու պատճառով բանվորին ապառիկ մթերք չեն տալիս, և նրանք մնում են առանց սննդի։ Շատ բանվորներ, այդ բոլորը չտանելով, փախչում են հանքերից[27]։

XX դ. սկզբներին, ինչպես ռուսական նահանգներում, այնպես էլ Արևելյան Հայաստանում բանվորների աշխատավարձի բարձրացումը արմատական փոփոխություններ չմտցրին բանվորական սննդի համակարգում, նրանց մեծ մասը թանկության պատճառով իրեն ստիպված զրկում էր ամենաանհրաժեշտ բաներից։ Դա հաստատում է նաև ժամանակի մամուլը. «Բանվորները այժմ քիչ են ուտում, վատ են հագնվում, քան առաջ, նրա կենսամթերքները զգալիորեն վատացել են»[28]։

Այսպիսով, Ռուսաստանի և Արևելյան Հայաստանի բանվորների մեծամասնության սնունդը թե քանակով և թե որակով անբավարար էր։ Այն բնութագրվում էր միօրինակությամբ, ցածրորակությամբ և թանկությամբ։ Այս հանգամանքը մեծ չափով նպաստում էր բանվորների դժգոհությունների աճին և արդարացի ատելություն էր առաջացնում տիրող կարգերի դեմ։

ПОЛОЖЕНИЕ РАБОЧИХ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В НАЧАЛЕ XX ВЕКА (РАСХОДЫ БЮДЖЕТА И ПИТАНИЕ)

С. С. АКОПЯН

Резюме

Рабочий класс Восточной Армении, несмотря на попытки улучшить свое положение, тем не менее жил и трудился в тяжелых условиях капиталистического и национального гнета. Свидетельством тяжелого материального положения рабочих являлся их нищенский бюджет, который не удовлетворял самых минимальных потребностей семей рабочих. Питание рабочих было неодинаковое в различных районах страны, в зависимости от величины бюджета, состава семьи, местных и национальных особенностей. Питание большинства рабочих Восточной Армении было недостаточным, по количеству и по качеству было дорогим и некалорийным.

Около 1/3 своего бюджета рабочие тратили на питание.

---

27 ՀՀ ՀՊԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 65, էջ 7—8։

28 Սոցիալ-դեմոկրատ, 1907, № 10։

Աղյուսակ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ, ՄՈՍԿՎԱՅԻ, ԲԱՔՎԻ ԵՎ ՀԱՅ ՄԻԱՅՆԱԿ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ (ԱՄՍԱԿԱՆ) 1907—1909 թթ.*

	Եկամուտ և ծախսերը (միջինով)	Պետերբուրգի բանվորներ		Մոսկվայի բանվորներ		Բաքվի բանվորներ		Հայ բանվորներ	
		Միջինը՝ 1 բյուջեի համար (ռ. կ.)	% ընդհանուր ծախսի համեմատ	Միջինը՝ 1 բյուջեի համար (ռ. կ.)	% ընդհանուր ծախսի համեմատ	Միջինը՝ 1 բյուջեի համար (ռ. կ.)	% ընդհանուր ծախսի համեմատ	Միջինը՝ 1 բյուջեի համար (ռ. կ.)	% ընդհանուր ծախսի համեմատ
	Ընդամենը՝ եկամուտ	37.66		18.93		30.15	—	31.65	—
	Ծախսերը								
1	Բնակարանային	5.46	14.7	0.56	3.0	3.46	11.8	3.17	10.0
2	Սննդի (հանած ծխախոտը և խմիչքը)	13.87	37.3	6.96	36.9	9.79	33.3	9.12	28.8
3	Հագուստեղեն	5.12	13.8	1.70	9.0	3.60	12.2	3.70	11.7
4	Բուժ. սպասարկման հիգիենա	1.64	4.4	0.35	1.9	1.27	4.3	1.12	3.5
5	Կուլտուր-լուսավորչական (կրթության)	1.72	4.6	0.17	0.9	0.46	1.6	0.23	0.7
6	Սոցիալ-հասարակական	0.34	0.9			0.12	0.4	0.22	0.7
7	Օգնություն հարաղատներին	4.07	10.9	7.35	38.6	7.78	26.4	9.45	29.9
8	Խնայողություն							1.43	4.5
9	Հոգևորական (եկեղեցական)	0.07	0.2	0.05	0.3	0.05	0.2	0.17	0.5
10	Այլ ծախսեր	4.91	13.2	1.74	9.2	2.90	9.8	3.04	9.6
	Ընդամենը՝ ծախսեր	37.20	100	18.88	100	29.43	100	31.65	100

* *Տե՛ս* А. М. Стопани, Нефтепромышленный рабочий его бюджет, М., 1924, *Նոր խոսք*, 1911, № 1—2, *էջ* 31—36, Э. Э. Крузе, Положение рабочего класса России в 1900—1914 гг. Л., 1981, с. 218—219 *(Աղյուսակի հաշվարկները, ուղղումները և ճշգրտումները մեր կողմից են կատարվել)։*